ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2025 թվականի N 938-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 877-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի «Մեղմացնող միջոցառումներ կիրառելու թույլտվություն տալու մասին» N 877-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 4-րդ կետի «հավելվածի 1-ին» բառերից հետո լրացնել «կետում նշված պայմանագրի ժամկետը մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերը.

2) որոշման 4-րդ կետի «և 2-րդ կետերում նշված պայմանագրերի ժամկետները» բառերը փոխարինել «, հավելվածի 2-րդ կետում նշված պայմանագրի ժամկետը» բառերով.

3) որոշման 4-րդ կետի «մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը՝» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը՝» բառերով.

4) որոշման հավելվածի 1-ին կետի 6-րդ սյունակի «30.11.2024» թվերը փոխարինել «30.09.2025» թվերով.

5) որոշման հավելվածի 3-րդ կետի 6-րդ սյունակի «30.09.2024» թվերը փոխարինել «30.09.2025» թվերով:

2. Սահմանել, որ սույն որոշման գործողությունը տարածվում է՝ «Շիրակի Ջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնում» թիվ CIP II-P3-SH LOT 1 պայմանագրի մասով՝ 2024 թվականի նոյեմբերի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սպասարկման տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնում» թիվ CIP II-P3- AWSC LOT 3/1 պայմանագրի մասով՝ 2024 թվականի սեպտեմբերի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

10.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ